

թիւնս մեր. եւ նոքա ցանկ երկիւղիւ եւ դողութեամբ ծառայեն մեզ եւ անտարոտիս ինչ եւ վնասակարս ինչ ոչ խորհին: 9 Ե զի եւ սովորութիւն առնուն յանկչել¹ յաւրէնս մեր, հանապազ խաւսիւք ընդ միմեանս եւ ընդելական բարեկամութեամբ, ի զբաւսմունս որսոց եւ ի խաղս², որ լինին ի միջի նոցա. այլ եւ ամուսնութեանց տուրեւառիւք հաղորդեալք առ միմեանս՝ զատուցեալք այնուհետեւ որոշին ի սիրոյ նոցա եւ յաւրինացն:

10 Եւ սորա խորհելով զայս այսպէս՝ չգիտեր զբան սուրբ Զոգոյն, որ ասեր, թէ *Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի եւ ընդունայնս*: 11 Որ փութանակի եւ արդեամբք վճիռ ետուն գրեալքն՝ իրացն եղելոցն. քանզի չեւ եւս յերկարեալ ի թագաւորութեանս՝ մեռանէր Յազկերտ: 12 Ի նմին անուր եւ զորդի նորին զՇապուհ, զոր ի տեղի Արշակունւնոյն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անդրէն ի դրանս մարդկանէ դաւով յարքունիքն սատակեցին: 13 Եւ յետ մահուանն Յազկերտի որդւոյ Շապուհոյ թագաւորին Պարսից թագաւորեաց Վռամ որդի նորա ի վերայ աշխարհին Արեաց: 14 Եւ եկեալ³ իշխանք աշխարհին Զայոց առաջի Վռամայ արքային Պարսից, ինդրեցին իւրեանց թագաւոր յազգէն Արշակունեաց: 15 Եւ նա թագաւորեցոյց ի վերայ նոցա զԱրտաշէս որդի Վռամշապիոյ, յազգէ թագաւորացն Զայոց:

ԺԳ. Եւ էր Արտաշէս այր մանուկ եւ իգամով, եւ բազում անառակութեամբ վարէր զթագաւորութիւնն: 2 Եւ չկարացեալ այսպիսի զեղիս եւ մոլեկան⁴ վարուց թագաւորին Արտաշէսի տանել նախարարքն Զայոց՝ ժողովեցան միահամուռ առ մեծ քահանայապետն Զայոց առ սուրբն Սահակ, որ էր յազգէն Պարթեաց, որդի սրբոյն Ներսէսի, եւ ասեն ցնա. «Ոչ եւս կարեմք այսպիսի անաւրէն եւ պիղծ գործոց թագաւորին համբերել. վասն զի լաւ համարիմք մեռանել՝ քան եթէ զայսպիսի գործ աղտեղութեան հանապազաւր տեսանել եւ լսել: 3 Այլ եւ մեծի պատուական եւ երկնաւոր խորհրդոյն⁵ հաղորդել ոչ կարեմք ի խղճէ մտաց, զաւր ամենայն տեսանելով զայսպիսի պղծագործութիւն, եւ լռել⁶. քանզի ուսեալ եմք ի քէն եւ ի քոց նախնեացն⁷ վարդապետութենէ, թէ ոչ միայն որ գործենն պարտական են, այլ եւ որ յանձն առնուն: 4 Արդ՝ քեզ նախ պարտ է այսպիսի անհնարին աղէտից ինդրել հնարս եւ բառնալ ի միջոյ զայնպիսի ամբարշտեալ թագաւոր, որ

1 2. յակչել

2 ՏՏ. որսոց, ի խաղս

Ս Սաղմ. ՂԳ 11. Ա Կոր. Գ 20

3 2. եկեալք

4 2. զխեղճ եւ զմոլեկան. ԲԳտ. զեղիս մոլեկան

5 2. խորհրդոյն

6 ՏՏ. եւ լսել

7 ՏՏ. ի քո նախնեացն